

## ՔԱՂՎԱԾՔ

### Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 10 ապրիլի 2020թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակում համալրում կատարելու համար՝ անցկացնելով փակ մրցույթ, 2020թ. ապրիլի 10-ի նիստում քննարկեց Ա. Ժ.-ին դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու հարցը:

Հաշվի առնելով հարցազրույցի արդյունքները, քննարկվեց Ա. Ժ.-ին միաժամանակ դատախազների թեկնածությունների և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու հարցը:

Հաշվի առնելով ստուգման արդյունքները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 11-րդ մասով, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 39-րդ հոդվածի 4-րդ մասով, ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի N 1 հավելվածի 26-րդ կետով, ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 7-րդ ենթակետով, Հանձնաժողովը

### ՈՐՈՇԵՑ՝

Ա. Ժ.-ին ընդգրկել դատախազների թեկնածությունների և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ծառայողական առաջխաղացման ցուցակում: